DOI: 10.57192/18291864-2024.3-57

Գևորգ Ս. Խուդինյան
Պատմ. գիտ. դոկտոր

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԱՎՈՐԱՍԻԱԿԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ – 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

Մաս հինգերորդ: ՀՅԴ առանցքային դերակատարությունը Իրանի 1905-1912 թթ. Սահմանադրական հեղափոխության եվրոպական արևելումի ապահովման գործում*

Բանալի բառեր – ՀՅ Դաշնակցություն, Իրան (Պարսկաստան), Սահմանադրական հեղափոխություն, կապեր ու հարաբերություններ, ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողով, Սոցիալիստական ինտերնացիոնալ, Ռուսաստան, Ֆրանսիա, Բուլղարիա, եվրոպական արևելում:

Մուտք

Իրանի (Պարսկաստանի) (1905-1912 թթ.) Սահմանադրական հեղափոխության մեջ ՀՅ Դաշնակցության քաղաքական դերակատարության մասին անցած հարյուրամյակում հրապարակվել են բազմաթիվ արխիվային փաստաթղթեր, նամակների ժողովածուներ, ստեղծվել է պատկառելի գիտական գրականություն[1]: Հասանելի է նաև ժամանակակիցների և իրադարձությունների մասնակիցների գրությունների ու հուշերի զգալի մասը[2]:

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.09.2024:

1 Տե՛ս **Ամուրեան Ա.**, ՀՅ Դաշնակցութիւնը Պարսկաստանում 1890-1918, Դաշնակցութեան 60-ամեակին առիթ, Թեհրան, տպարան «Ալիք», 1950: Տե՛ս նաև Դաշնակցութիւն. Եփրեմ. Պարսկական Սահմանադրութիւն (ՀՅԴ Կենտրոնական արխիւ), Ուսումնասիրեց եւ խմբագրեց՝ **Ամուրեան Ա.**, Ա հատ., Թեհրան, տպարան «Ալիք», 1976, Բ հատոր, Թեհրան, 1979:

2 Տե՛ս Ռոստոմ: մահուան վաթսունամեակին առթիւ, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1979, «Ռոստոմի անտիպ նամակները», հրատարակութեան պատրաստութիւն,

Սակայն անգամ նման հարուստ աղբյուրագիտական հենքի վրա ստեղծված հոդվածներն ու ուսումնասիրությունները մինչ օրս գրեթե չեն բացահայտել Իրանի Սահմանադրական հեղափոխությանը մասնակից ու դերակատար ուժերի և գործիչների հետ ՀՅ Դաշնակցության կապերն ու հարաբերությունները, որոնց համատեքստում է միայն հնարավոր հասկանալ այդ հեղափոխությանը ՀՅԴ մասնակցության իրական պատճառները: Այս խիստ այժմեական գիտաթեման անուշադրության է մատնվել մի քանի պատճառներով.

ա) Հայաստանի Հանրապետության անկումից հետո ՀՅ Դաշնակցության գործունեության գնահատման «սփյուռքյան ոսպնյակում» հասկանալի պատճառներով նվազեցվում էր միջազգայնականությունը՝ ի հաշիվ ազգային օրակարգի,

բ) իսկ «խորհրդային ոսպնյակով» որպես հետադիմական ուժ դիտարկվող ՀՅԴ-ի կերպարը չէր տեղավորվում Սահմանադրական հեղափոխությանը մասնակցած այլ ուժերի, մասնավորապես՝ Անդրկովկասից Իրան թափանցած սոցիալ-դեմոկրատների կողքին[3]:

գ) Սփյուռքում ստեղծված փաստաթղթերի ժողովածուների ու ուսումնասիրությունների՝ հիմնականում Իրանում ծնված ու մեծացած հեղինակները հեռու էին միջազգայնական հոսանքից, ուստի Սահմանադրական հեղափոխությունը քննում էին առավելապես ներիրանական քաղաքական օրակարգերի շրջանակում:

Միայն Հայաստանի վերանկախացման ու մանավանդ մեր հարևան ու բարեկամ երկրի՝ Իրանի՝ համաշխարհայնացման գործընթացներում ինքն իրեն վերագտնելու և Պարսկաստանի քաղաքակրթական ակունքներին վերադառնալու առաջին երկչոտ փորձերի համատեքստում է հնարավոր հասկանալ, քննել ու բացահայտել ավելի քան 100 տարի առաջ տեղի ունեցած Իրանի Սահմանադրական հեղափոխության իրական քաղաքական բովանդակությունը և Արևելքի ժողովուրդների համար այդ կար-

---

խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ՝ **Երուանդ Փամպուքեանի**, Եր., «Լուսակն», 2012, **Յովհաննիսեան Յովսէփ**, Յուշեր, Ա հատ., Եր, «Գասպրինտ», 2006:

3 Դա է պատճառը, որ անգամ 1966 թվականին՝ խրուշչովյան հալոցքի շրջանում, ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի հրատարակած «Երկրորդ ինտերնացիոնալի պատմությունը» երկհատորյակի երկրորդ հատորում խոսք անգամ չկար Իրանի Սահմանադրական հեղափոխությանը ՀՅԴ-ի և այլ ազգային կուսակցությունների ակտիվ մասնակցության ու նրա գլխավոր հերոս Եփրեմ Դավթյանի առանցքային դերակատարության մասին: Փոխարենը փառաբանվում էին «Իրանական Ադրբեջանը» և իր «քաղաքական գործունեությունը» ձիագողությունից սկսած Սաթթար խանը: Տե՛ս История второго интернационала, т. 2, отв. ред. **Зубок Л. И.**, М., изд. «Наука», 1966, էջ179-185.

ևոր իրադարձության մեջ ՀՅԴ ստանձնած առաքելության իմաստն ու նշանակությունը:

Հայտնի է, որ ՀՅ Դաշնակցության 1892 թ. ծրագրում ամրագրված քաղաքական նպատակը Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրն էր, որին 1907 թ. ծրագրում ավելացվել էին Ռուսական առաջին հեղափոխության արշալույսին ընդունված «Կովկասյան նախագծով» Անդրկովկասի հայության իրավունքներն ամրագրող կետերը: Դրանցից ո՛չ առաջինում և ո՛չ էլ երկրորդում Պարսկաստանի՝ որպես քաղաքական գործունեության առանձին նպատակի մասին խոսք անգամ չկար, քանի որ ավանդաբար «Վրեժը» կամ «Վրեժստանը» դիտվում էին որպես միջանկյալ գործելադաշտեր՝ Արևմտյան Հայաստան անցնելու ճանապարհին: Ուրեմն ի՞նչ տեղի ունեցավ ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովում (1907 թ. փետրվար-մայիս), որ քիչ անց՝ 1907 թ. օգոստոսի 18-21-ին կայացած Սոցինտերնի Շտուտգարտի կոնգրեսից հետո կուսակցությունը վերակողմնորոշվեց դեպի 1905 թվականին սկիզբ առած, իսկ 1906-ին՝ արագացած Իրանի Սահմանադրական հեղափոխությունը:

Իրականությունն այն է, որ 20-րդ դարասկզբին Ռուսաստանում ու Իրանում գրեթե միաժամանակ, իսկ Թուրքիայում մի փոքր ավելի ուշ սկիզբ առած հեղափոխությունների ու հեղաշրջումների ողջ շղթան միայն այդ երեք երկրների ներքին օրակարգերով չէր սահմանափակվում: Դրանց միմյանց ու արտաքին աշխարհի հետ կապում էր մեկ ընդհանուր՝ միջազգայնական (ինտերնացիոնալ) հոսանքի պորտալարը, որի մի մասն էր կազմում Սոցիալիստական ինտերնացիոնալի գործունեության ակտիվացումը: Ուստի Սոցինտերնի Շտուտգարտի կոնգրեսը, որը ՀՅ Դաշնակցության՝ Ռուսաստանում գործող կազմակերպությանն ընդունեց իր շարքերը որպես սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիայի մեկ հատված, որոշակի հիմք ու քաղաքական խթան դարձավ նման քայլերի համար:

Անշուշտ, նախքան այդ ՀՅ Դաշնակցությունը որոշակի գործառույթներ է իրականացրել Արևելքի ժողովուրդների շրջանում լուսավորության տարածման գործում, բայց հայտնի է, որ միայն Շտուտգարտի կոնգրեսից հետո՝ 1907-ի վերջերին, տեղի ունեցավ ՀՅԴ գործակցության ինստիտուցիոնալացումը ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ Պարսկաստանի ընդդիմադիր ու հեղափոխական ուժերի համակարգում: Իսկ դա պահանջում էր որոշակի համագործակցություն Թուրքիայում ու մանավանդ Իրանում միջազգայնականության քողի տակ քաղաքական դերակատարության հավակնող այն գործիչների հետ, որոնք ոչ վաղ անցյալում ՀՅԴ հակառակորդներն էին: Քանի որ մինչև ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովը

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցություններն ու խմբակ-ները, ինչպես նաև սուլթանական կառավարությանն ընդդիմադիր կա-ռույցներն ու գործիչները, արդեն որոշակի ներկայություն էին Իրանի Սահմանադրական հեղափոխության մեջ, ՀՅԴ-ն չէր կարող զերծ մնալ այդ գործընթացից: Նման ուժերի հետ Իրանի Սահմանադրական հեղա-փոխության շրջագծում ՀՅԴ կապերի ու հարաբերությունների մասին վկայող փաստերի համակարգված քննությունն է միայն բացահայտում այս շրջադարձի խորքային զսպանակները: Պատճառն ակնհայտ է. ինչ-պես Կովկասյան շրջանային ժողովներում, այնպես էլ Իրանում գործող դաշնակցական մարմիններում հստակ միասնություն չկար Սահմանադ-րական հեղափոխությանը մասնակցելու հարցում: Դրանցում իրանահա-յության անվտանգության պահպանման նկատառումներով հաճախ հնչում էին բավականին փաստարկված անհանգստություններ: Ուստի ՀՅ Դաշ-նակցությունը ոչ միանգամից որոշեց մասնակցել Իրանի Սահմանադրա-կան հեղափոխությանը: Կարծում ենք, որ ՀՅԴ նման քայլի խորքային պատճառները բացահայտելու համար հարկավոր է նաև հպանցիկ հա-յացք նետել Իրանի պատմությանը՝ այդ երկրի ու Հայաստանի քաղա-քակրթական ընդհանրությունների ընկալման նպատակով:

1. Իրանը (Պարսկաստանը) համաշխարհային քաղաքակրթության ակունքներում. պատմական ակնարկ

Դեռևս 19-րդ դարում եվրոպական (տվյալ դարաշրջանում՝ նաև հա-մաշխարհային) փիլիսոփայական մտքի դասականներն ու նրանց ստեղ-ծած գիտատեսական հիմքի վրա ձևավորված պատմական գիտությունը՝ պատմագիտությունը, հիմնովին հերքել են Իրանը որպես ի սկզբանե հե-տամնաց, ասիական երկիր դիտարկող քաղաքական գործիչների և ան-գամ մասնագետ պատմաբանների մոտ առկա կարծրատիպերը: Պատ-մության՝ համաշխարհային-պատմական ընկալումը հիմնվում է վաղուց արդեն գիտականորեն ապացուցված այն ելակետի վրա, որ համաշխար-հային քաղաքակրթության զարգացման համար բեկումնային նշանա-կություն ունեցած **պատմական ամբողջի** ձևավորումը ու դրա հիման վրա Եվրոպայից մինչև Կենտրոնական Ասիայի սահմանները ձգվող քա-ղաքակրթական սինթեզի սկզբնավորումն անհնարին էին առանց Աքե-մենյան Պարսկաստանի ինտեգրող դերի: Այս առումով՝ ամենևին էլ պա-տահականություն չէր Գեորգ Հեգելի գիտականորեն հիմնավորված եզ-

ռահանգումը՝ «պարսիկները հանդիսանում են առաջին պատմական ժողովուրդը»[4]:

Ինչպես Գ. Հեգելից մեկ դար հետո նկատում էր փիլիսոփայության էքզիստենցիալիստական ուղղության ներկայացուցիչ, նույնպես գերմանացի Կառլ Յասպերսը, մարդկության համար բեկումնային՝ առաջին մարգարեների ու համաշխարհային կրոնների հանդես գալու շրջանում՝ Առանցքային ժամանակում (Achsenzeit)՝ մ.թ.ա. 800–200 թվականներ, երբ «միֆոլոգիական աշխարհայացքին փոխարինելու եկավ ռացիոնալը և (կամ) փիլիսոփայականը և հայտնվեց այն տիպի մարդը, որը պահպանվել է մինչ օրս»[5]: Հնդեվրոպական (արիական) ժողովուրդների ստեղծած պատմական ամբողջի ձևավորման շրջանում Պարսկաստանը համաշխարհային քաղաքակրթության նախնական ատաղձի կարևորագույն մասերից մեկն էր: Ի տարբերություն հնդկական ու չինական ներփակ քաղաքակրթությունների՝ շնորհիվ բազմազգ կայսրություն կերտելու իր ունակության՝ Պարսկաստանը ինտեգրող դեր է խաղացել՝ Եվրոպայից մինչև Կենտրոնական Ասիա ձգվող համաշխարհային քաղաքակրթության ընօրրանում, ընդհուպ մինչև Մակեդոնացու արշավանքներն և այդ ինտեգրումը սինթեզի վերածած հելլենիզմի դարաշրջանը: Այսինքն՝ Պարսկաստանը ի սկզբանե եղել է այն մեծ ու ամբողջական քաղաքակրթության բաղկացուցիչ մասը, որը հետագայում ստացել է եվրոպական, արևմտյան, իսկ այժմ՝ համաշխարհային անվանումները:

Միջնադարում արաբների և ապա թյուրքական քոչվոր ցեղերի ներխուժման արդյունքում աղճատվել է Իրանի քաղաքակրթական դիմագիծը, սակայն շնորհիվ իր հզոր մշակութի՝ այդ երկիրը կարողացել է «ազգայնացնել» իսլամը՝ նրա շիա ուղղության միջոցով և դրա հիման վրա աստիճանաբար «ազգայնացնել» այն պետական կազմավորումները, որոնք ձևավորվել են Իրանի տարածքում: Նոր ժամանակներում այս բարդ գործընթացի մի կարևոր հանգրվանն էր Իրանի Սահմանադրական հեղափոխությունը, երբ երկրում իշխող Ղաջարների՝ թյուրքական ծագմամբ դինաստիան, ապավինելով Ռուսական կայսրության սվիններին, վերջնականապես դրսևորեց իր անհամապատասխանությունը Իրանի քաղաքակրթական ձգտումներին, ուստիև քիչ անց իր տեղը զիջեց բուն պարս-

4 Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 209. Տե՛ս նաև՝ **Հակոբյան Արարատ**, Պատմության տեսության ու մեթոդաբանության հարցերը Գ. Հեգելի «Դասախոսություններ պատմության փիլիսոփայությունից» աշխատության մեջ, «Վէմ», Եր., 2024, N 2, էջ 95:

5 **Ясперс К.,** Истоки истории и ее цель, в кн. «Смысл и назначение истории», https://predanie.ru/book/221102-smysl-i-naznachenie-istorii/#/toc2

կական հենքի վրա ազգային պետականության վերահաստատման ու արդիականացման գործը սկսած Փահլավիների հարստությանը:

Պատահականություն չէր նաև, որ 19-րդ դարում իրանահայության լավագույն մտավորական ուժերը՝ կրթության, գիտության, մշակույթի գործիչները, դարձել էին Իրանում եվրոպական արժեքների տարածման գործի առաջամարտիկները՝ յուրաքանչյուրը գործունեության սեփական բնագավառում: Իրանահայության նման ձգտումներն է՛լ ավելի ընդգծվեցին ու համակարգված տեսք ստացան հայ ազատամարտի սկզբնավորման ու մանավանդ ՀՅ Դաշնակցության Իրան թափանցելու արդյունքում:

Թավրիզում հաստատված դաշնակցականների լայն լուսավորական գործունեությանը զուգահեռ՝ կուսակցության հիմնադրության տարում՝ 1890 թվականին, Լոնդոնում սկսել էր լույս տեսնել Իրանի նոր պատմությանը հայտնի ամենանշանավոր բարեփոխիչներից մեկի՝ Մելքոմ խանի (Հովսեփ Մելքումյան – 1834-1908) «Կանուն» («Օրենք») պարբերականը՝ սահմանադրական կարգերի լավագույն քարոզիչը: Նոր Ջուղայում ծնված այդ ինքնատիպ մտածողն ու դիվանագետը երազում էր լուսավորության տարածման միջոցով Հին Պարսկաստանի դարավոր քաղաքակրթական ավանդույթները վերականգնելու մասին: Նրա բարեփոխական ծրագրերն ընդգրկում էին Իրանի կյանքի գրեթե բոլոր բնագավառները, ուստի զգալի ազդեցություն ունեցան 20-րդ դարասկզբին սկսված Իրանի սահմանադրական շարժման վրա: Սրանով Մելքոմ խանը կամ Հովսեփ Մելքումյանը դառնում էր եվրոպական արժեքները Արևելքում տարածելու՝ հայության դարավոր գործառույթի հիմնական կրողը Իրանի բազմազգ միջավայրում: Գործառույթ, որը նույն պատմաշրջանում իրականացրին նաև Եգիպտոսի առաջին վարչապետ Նուպար փաշան (1825-1899)՝ Եգիպտոսում և 1860-1870-ականների պոլսահայ սահմանադրական-լուսավորականների կարկառուն ներկայացուցիչ Գրիգոր Օտյան էֆենդին (1834-1887)՝ Օսմանյան կայսրությունում: Իրականում հենց վերջինս է կազմել 1876-ին Միդհատ փաշայի կողմից ժամանակավորապես գործի դրված, իսկ 1908 թ. զինվորական հեղաշրջումից հետո վերականգնված Օսմանյան սահմանադրությունը: Գրիգոր Օտյանից ընդամենը մի քանի տարի անց Ռուսաստանի Ալեքսանդր երկրորդ Ազատարար ցարի ամենազոր ներքին գործոց նախարար Միքայել Լոռիս-Մելիքովը (1825-1888) կազմեց մեկ այլ բռնապետության մեջ չափավոր սահմանադրական կարգերի հաստատման իր հայտնի ծրագիրը՝ Լոռիս--Մելիքովի Սահմանադրությունը, որի գործադրումը ձախողվեց Ալեքսանդր երկրորդի սպանության հետևանքով:

Ստացվում է, որ 19-րդ դարի երկրորդ կեսին արևելաեվրոպական ու առաջավորասիական բոլոր մեծ բռնապետությունների լծի տակ տառապող ժողովուրդների քաղաքական ձգտումները դեպի լուսավորություն ու սահմանադրական կարգեր ուղղորդվել են նրանցում ղեկավար պաշտոններ ստանձնած կամ առաջադիմական գաղափարներ քարոզած հայ գործիչների կողմից:

Այսպիսով՝ չնայած նրան, որ 20-րդ դարասկզբին Իրանը համարվում էր հետամնաց ասիական երկրներից մեկը, բայց եվրոպական լուսավորականության գաղափարների տարածման ու երկրի աշխարհիկացման առաջին իսկ փորձերի համատեքստում արձանագրվում էին նրա բուն ինքնության վերականգնման և Մերձավոր ու Միջին Արևելքում սկիզբ առած ու Եվրոպայի հարավ-արևելքով (հելլենական աշխարհ) ընդարձակված ՝ պատմական ամբողջի ձևավորման գործում իր նախնական դերակատարությունը վերստանձնելու փորձեր: Այդ փորձերին օժանդակելու, դրանք հունավորելու ՀՅ Դաշնակցության քաղաքականությունը ասիական միջավայրերում հելլենիստական մշակույթի, քրիստոնեական արժեհամակարգի և ապա՝ եվրոպական լուսավորականության գաղափարների տարածման Հայաստանի ու հայության դարավոր քաղաքակրթական առաքելության շարունակությունն էր:

2. Ազգայնության սկզբունքն ու միջազգայնականությունը Պարսկաստանում

Ներկա հոդվածաշարում արդեն նկատել ենք, որ 1889 թ. Փարիզում հիմնված Սոցիալիստական ինտերնացիոնալը 1990-ականներին ընդլայնել էր իր գործունեության շառավիղը՝ «ծննդյան վկայականներ» տրամադրելով նաև Արևելյան Եվրոպայի ու Առաջավոր Ասիայի բազմաթիվ երկրների սոցիալիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցություններին ու հատուկ բանաձևով թույլատրելով նրանց կողմից պայքարի ոչ խորհրդարանական (հեղափոխական) մեթոդների կիրառումը: Ավելին, Սոցիալիստական ինտերնացիոնալի չորրորդ կոնգրեսը, որն անցկացվեց 1896 թ. հուլիսի 27-ից օգոստոսի 1-ը Լոնդոնում, դատապարտելով գաղութատիրությունը՝ կանգնեց ճնշված ժողովուրդների կողքին, որոնց թվում էր սուլթանական բռնապետության դեմ մաքառող արևմտահայությունը:

Սոցիալիստական ինտերնացիոնալի կոնգրեսներից առաջինը, որը ոչ միայն անդրադարձավ Արևելքի բռնապետական վարչակարգերի դեմ

պայքարի խնդրին, այլև կոնկրետ մեխանիզմներ ձևավորեց այդ գործը հունավորելու համար, դա 1900 թվականի սեպտեմբերի 23–27–ին Փարիզում կայացած 5–րդ կոնգրեսն էր: Այստեղ է, որ ընտրվեց կոնգրեսների միջև գործող Միջազգային սոցիալիստական բյուրոն: Նույն օրերին Համաշխարհային ցուցահանդեսի շրջանակներում գործող Խաղաղության համաժողովն ի ցույց դրեց նաև միջազգային ասպարեզ մուտք գործող թուրք ընդդիմադիրների բացասական դիրքորոշումը սուլթանական բռնապետության դեմ պայքարում ժողովուրդների համերաշխության՝ ինտերնացիոնալիզմի սկզբունքի հանդեպ: Այս իրողությունն է՛լ ավելի ակնհայտ դարձավ հետագա մի քանի տարիների ընթացքում, և միայն սուլթանական բռնապետության տապալման նախօրեին՝ 1907 թ. դեկտեմբերին, հաջողվեց հասնել որոշակի համաձայնությունների տարբեր ընդդիմադիր ուժերի միջև: Բայց դրանք ակնհայտորեն մարտավարական հողի վրա էին ու հիմնվում էին մի կողմից՝ սուլթանական բռնապետության մոտալուտ տապալման հեռանկարի, իսկ մյուս կողմից՝ միջազգային սոցիալիստական շարժման որդեգրած տարածաշրջանային առաջնահերթությունների վրա: Ռազմավարական գետնի վրա բացակայում էր կողմերի հեռահար նպատակները միավորող ընդհանուր քաղաքակրթական ենթահողը: Պատճառն այն է, որ հայ–թուրքական կոնֆլիկտը քրիստոնեության ու իսլամի քաղաքակրթական արժեհամակարգերի բախման հետևանք չէր, որովհետև «քաղաքակիրթ թուրքերի» մոտ իսլամի դերի թուլացումով առաջ եկող դատարկությունը արտաքուստ էր միայն լցվում եվրոպական արժեհամակարգով: Այստեղ աշխարհիկացումն իրականում սնվում էր ոչ թե եվրոպական ռենեսանսին բնորոշ հումանիզմով, այլ քոչվորների նախնական պատկերացումներին համապատասխանող սոցիալդարվինիստական փաստարկումներով: Դրանով «նոր թուրքը» ոչ թե քաղաքակրթվում էր, այլ քաղաքակրթությունից վերցնում էր այն, ինչը որոշակի տարածքների զավթման ու նրանց բնակչության ոչնչացման ցեղասպանական մտադրության «գիտական հիմնավորման» սաղմն էր պարունակում: Ուստի բիոլոգիական տեսակների՝ միմյանց ոչնչացնելու նպատակադրումից ծնունդ առնող գաղափարախոսությունն ու քաղաքականությունը, համապատասխանելով համաթյուրքական միասնության աշխարհագրական սահմանների ընդարձակման գաղափարին, բացառում էր աշխատավորների համերաշխությունը դասակարգային կամ ընկերային հիմքի վրա:

Բոլորովին այլ քաղաքակրթական ելակետի վրա էր հիմնում Պարսկաստանի բազմազգ ու բազմացեղ իրականությունը, որը տարբեր արժե-

քային կողմնորոշումներ ունեցող ժողովուրդների ու ցեղերի մի բարդ խճանկար էր: Այստեղ ազգայնության սկզբունքին, այսինքն՝ ազգ-պետությունների ձևավորման ու էթնիկական սահմանների հստակեցման օրինաչափ ու առաջադիմական գործընթացին փոխարինում էր արևելյան բռնապետության խորհրդանիշ շահական իշխանության կամայականությունները չափավորող սահմանադրական շարժումը, որը ժամանակի ընթացքում ձեռք բերեց հեղափոխական կերպարանք: Նրանում ներկայացված էին հիմնականում երկրի զույգ կենտրոնների՝ Թեհրանի ու Թավրիզի ունևոր դասի ու հոգևորականության ներկայացուցիչներն ու հեղափոխական ակումբների՝ **անջումանների** մեջ համախմբված վաճառականների ու արհեստավորների հիմնական զանգվածը: Պարսկաստանում ծավալված շարժման նման դասակարգային կազմը հստակորեն բացահայտվել է դեռևս ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովում. «շարժման ղեկավարներն են վաճառականական եւ հոգեւորական շահագրգռուած դասակարգերը. մէկը իբր ներկայացուցիչ տնտեսական վտանգուած արդիւնաբերութեան, իսկ միւսը՝ իբրեւ ներկայացուցիչ ժողովուրդի կրօնական հին կարգերի եւ օրէնքների»[6]:

Դրանից պարզ էր դառնում, որ Թավրիզի ու ողջ Ատրպատականի հեղափոխական ակտիվությունն իր հիմքում ամենևին էլ էթնիկ բաղադրատարր չէր պարունակում: Այդ պատճառով նրանում ակտիվ դերակատարություն ստանձնած թյուրքախոսների համար արտաքուստ խորթ թվացող ուժը՝ ՀՅ Դաշնակցությունը, դիտվում էր որպես շահական իշխանության հակառակորդներից մեկը: Ուստի պատահական չէ, որ Ատրպատականի հեղափոխականներն ու նրանց Սաթթար կամ Բաղըր խաների նման առաջնորդները չէին տրվում տեղի թուրք հյուպատոսի՝ անջատական քայլերի դիմելու հորդորներին: Իրանում ազգայնության սկզբունքը չստացավ ազգ-պետությունների ձևավորման ու էթնիկական սահմանների հստակեցման դարաշրջանին բնորոշ կերպարանք ոչ թե այն պատճառով, որ նրանում գոյություն չունեին առանձին էթնիկ խմբեր, այլ որովհետև դրանց առավել բազմամարդ ներկայացուցիչները, այդ թվում՝ իրենց թյուրք կամ ազարի համարող ատրպատականցիների նստակյաց-հողագործ զանգվածը, իրականում ոչ թե քոչվոր-թյուրքական, այլ բնիկ իրանական մշակույթի կրողն էր:

6 Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Գ հատ., հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց **Հրաչ Տասնապետեան**, Պէյրութ, հրատարակութիւն ՀՅ Դաշնակցութեան, ա. թ., էջ 260:

Արդյունքում՝ շահական բռնակալության դեմ պայքարն ընդունեց մշակութային առումով մեկ-միասնական հանրույթի համախմբման՝ իրանական ազգի ձևավորման գործընթացի տեսք, որի առանձին հատվածների այդ թվում՝ թարիզեցիների բողոքն ու ընդվզումը ոչ թե պարսիկների կամ այլ էթնիկ խմբերի, այլ շահի իշխանության դեմ էր, որը մարմնավորում էր արևելյան բռնապետությունը: Բնական է նաև, որ սահմանադրական հեղափոխությանն աջակցելու համար այդ երկիր թափանցած օտարերկրյա հեղափոխականների մեծամասնությունը նույնպես գործում էր ոչ թե այս կամ այն խմբին նախապատվություն տալու սկզբունքով, այլ իրանցի սահմանադրական-հեղափոխականներին դիտարկում էր որպես մեկ ամբողջություն: Այդ մեկ ամբողջությունն էր, որ մայրաքաղաք Թեհրանում ծավալված 1906 թ. հուլիսյան համառ պայքարից հետո ստիպեց իր կյանքը ճամփորդությունների ու վայելքների մեջ անցկացրած, ուստիև երկիրը արտաքին պարտքերի մեջ թաղած Մուզաֆերէդդին շահին ազդարարել խորհրդարանի (մեջլիսի) ստեղծման մասին: Բայց, քանի որ 1907-ի հունվարին շահը կնքեց իր մահկանացուն, նրա որդին՝ Մուհամմեդ Ալին, արդեն նույն թվականի հունիսին բոլոր բռնակալների հավատարիմ պահապան Ռուսաստանից ժամանած գնդապետ Վլադիմիր Լյախովի[7] ուժերով ռմբակոծեց մեջլիսն ու հաշվեհարդար տեսավ իրանցի սահմանադրականների հանդեպ:

Այս ցավալի իրադարձության նախօրեին՝ 1907-ի գարնանը, Վիեննայում կայացած ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովն ընդունել էր իր հայտնի որոշումը՝ Սահմանադրական հեղափոխությանն աջակցելու մասին: Նրանում նշվում էր, որ «պարսկական շարժումը կարող է դառնալ ժողովրդական արթնացման բնույթ ունեցող հասարակական խոշոր երեւույթ թէ՛ Պարսկաստանի, թէ՛ Արեւելքի համար», իսկ «դրա տարածուիլն ու լայնանալը ցանկալի՝ թէ՛ համամարդկային թէ՛ հայկական տեսակետից»[8]: Սա նշանակում էր, որ ՀՅԴ-ն առաջնորդվելով նույն ժողովում ընդունված կու-

7 Կովկասյան ռազմական օկրուգի հրամանատարի կարգադրությամբ 1906 թ. հունիսին Պարսկաստան անցած գնդապետ, իսկ հետագայում՝ գեներալ-լեյտենանտ **Վլադիմիր Պլատոնովիչ Լյախովի (1869-1920)** հաղթանակներն իրանցի սահմանադրականների նկատմամբ շարունակեցին մինչև Եփրեմ Դավթյանի ոչ մեծ զորաջոկատի 1909-ի փետրվար-հունիսյան արշավանքը Ռեշտից՝ Թեհրան: 1909 թ. հունիսի 29-ին Թեհրան մտած դաշնակցական հրամանատարից խայտառակ պարտություն կրելուց հետո Վ. Լյախովը ժամանեց մեջլիս ու իր զենքը հանձնեց Եփրեմին: Մինչ այդ Վ. Լյախովն իրականացնում էր նաև մայրաքաղաքի գեներալ-նահանգապետի գործառույթը, ինչը փաստացի կերպով անցավ Եփրեմին: Իսկ 1909-ի հուլիսին Մուհամմեդ Ալի շահի գահընկեց լինելուց հետո Վ. Լյախովը շտապ լքեց Պարսկաստանն ու նույն ամսին էլ նշանակվեց Սևաստոպոլում տեղակայված Բելոստոկյան հետևակային գնդի հրամանատար:

8 Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Գ հատոր, էջ 260:

սակցության երկրորդ ծրագրի համադրական աշխարհընկալման ելակետով, ազգային ու համամարդկային ազատագրության խնդիրները դիտարկում էր որպես մեկ ամբողջություն: Ելնելով դրանից՝ ժողովը հանձնարարում էր. «Պարսկաստանի դաշնակցական մարմիններին եւ անհատներին՝ բոլոր միջոցներով նպաստել այդ շարժման զարգացման, մտցնելով պարսկական արթնացման մէջ այն ազատական, ռամկավարական եւ աշխատաւորական ոգին, որ բխում է Դաշնակցութեան ծրագրից»[9]:

Ու թեև այս բանաձևի զեկուցաբերը Սիմոն Զավարյանն էր, բայց նրա հիմնավորման ու իրականացման գործի առաջամարտիկը դարձավ Ռոստոմը: Այդ պատճառով իզուր էր հետագայում Մ. Վարանդյանը փորձում ՀՅԴ նման հիմնավոր քայլը բացատրել Պարսկաստանի միապետական բանակի կողմից հայկական գյուղերում նույնպես կատարված բռնությունների ու ավերածությունների կամ էլ թուրքական զորքերի Սալմաստ ներխուժելու փաստարկներով[10]: Ի վերջո այդ նույն օրերին Կ. Պոլիսը թնդում էր հակասուլթանական պայքարի հուլիսյան հաջողությունից, որում ՀՅԴ-ն ու երիտթուրքերն ինքնաբերաբար նույն ճամբարում էին հայտնվել:

Ավելին, Թուրքիայում տեղի ունեցած հեղաշրջումից հետո հեղափոխական պայքարի նոր վերելք էր նկատվում նաև Պարսկաստանում, ուստի նոր շահը նույնպես իր հոր նման ստիպված էր տեղի տալ ու զիջումներ անել սահմանադրական շարժմանը՝ 1907 թ. հոկտեմբերին հաստատելով մեջլիսի կողմից մշակված երկրի հիմնական օրենքի «Լրացումները», ինչը նշանավորում էր սահմանադրության ընդունման գործընթացի ավարտը: Այս «Լրացումներով» Պարսկաստանի բոլոր քաղաքացիներին տրվում էին հիմնական համադեմոկրատական ազատությունները, իսկ հեղափոխական անջումանները օրինականացվում էին որպես տեղական ինքնավարության լեգիտիմ մարմիններ[11]:

Նման հաջողությունը արդեն 1907 թ. վերջերին սահմանադրական շարժման առաջնորդներին բերել էր այն հետևությանը, որ շահական իշխանությունն այդուհետ անզոր է կասեցնել բարեփոխումների հետագա ընթացքը, մինչդեռ երկրի ներքին ու արտաքին դրությունը խիստ անկայուն էր: Այս իրողությունն արձանագրում էին ոչ միայն Պարսկաստանում, այլև նրա հարևան երկրներում, ուստի դրանից հետո էլ ՀՅԴ կովկասյան

9 Նույն տեղում:
10 Տե՛ս **Վարանդեան Մ**, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Բ հատ., Բ հրատ., Թեհրան, 1981, էջ 258
11 Տե՛ս История второго интернационала, т. 2, էջ 182:

մարմինների ժողովներում շարունակվում էր «մասնակցի՞լ, թէ՞ չմասնակցիլ» բանավեճը: Իրականում՝ կուսակցութունը, այսպես ասած, «ոտքը կախ էր գցել»՝ սպասելով Սահմանադրական հեղափոխության վերաբերյալ ընդհանուր ժողովի ընդունած բանաձևի իրականացման գործի առաջամարտիկ Ռոստոմի Պարսկաստան այցի ու իրանցի սահմանադրականների հետ բանակցությունների կոնկրետ արդյունքներին:

3. Սահմանադրական հեղափոխության եվրոպական արևելումի ապահովման խնդիրը

Իրանի Սահմանադրական հեղափոխության[12] առաջնորդների հետ ՀՅ Դաշնակցության գործակցությունը համակարգված տեսք ստացավ կուսակցությանը ներկայացնող Ռոստոմի՝ 1907-ի դեկտեմբերին Թեհրան ժամանելու և 1908 թ. հունվարի առաջին օրերին Իրանի մեջլիսի ազդեցիկ դեմքերի հետ բանակցելու արդյունքում: Բանակցությունների բովանդակությունը բարեխիղճ կերպով շարադրված է Ռոստոմի կողմից 1908 թ. հունվարի 10-ին ՀՅԴ Արևելյան Բյուրոյին ուղղված մանրամասն նամակ-հաշվետվության մեջ[13]: Նրանում բարձրացված տարաբնույթ հարցերից ներկա հրապարակման համատեքստում կարևոր են՝ ա) մեջլիսի ղեկավարության հետ համաձայնեցված այն բոլոր արտաքին-քաղաքական ու քարոզչական նպատակները, որոնց լուծման գործում վերջինս ակնկալում էր ՀՅԴ աջակցությունը, բ) ՀՅԴ-ից ակնկալվող համագործակցության կոնկրետ ձևերն ու եղանակները, որոնց շրջագծում կուսակցությունը առաջնորդվելու էր պետական իշխանության դեմ ուղղված հեղափոխական գործելակերպով՝ ինչպես Կովկասից մարտական խմբեր փոխադրելու, այնպես էլ իրանահայության ներուժն օգտագործելու միջոցով:

Բանակցություններում անկայուն ներքաղաքական իրավիճակում գտնվող սահմանադրականներին գլխավորում էին մեջլիսի փոխնախագահ Վոսուղ-ադ-Դոուլեն, պետական խորհրդական Մոստեշադ ադ Դոուլեն, պատգամավոր Հաջի Ամին օլ Ջարբը, որը համարվում էր Պարսկաս-

12 Ներկա ուսումնասիրությունը նպատակ չունի ներկայացնելու Իրանի Սահմանադրական հեղափոխության տարբեր շրջափուլերում ՀՅԴ ծանրակշիռ ռազմաքաղաքական դերակատարության մանրամասները: Մեր խնդիրը Սահմանադրական հեղափոխության եվրոպական արևելումի ապահովման համար ՀՅԴ-ի ձեռնարկած քայլերի ու Պարսկաստանում գործող օտարերկրյա հեղափոխականների հետ կապերի ու հարաբերությունների բացահայտումն է, ինչը մինչ օրս դուրս է մնացել հայ պատմագիտության ուշադրությունից:

13 Տե՛ս Հ.Յ. Դաշնակցութիւն. Եփրեմ. Պարսկական սահմանադրութիւն (ՀՅԴ Կենտրոնական արխիւ), Ա հատ., ուսումնասիրեց և խմբագրեց՝ **Ա. Ամուրեան**, Թեհրան, տպարան «Ալիք», 1976, էջ 2-14:

տանի ամենահարուստ մարդը և ուրիշներ: Բանակցությունների արդյունքների՝ Ռոստոմի կողմից ներկայացված շարադրանքի բովանդակությունը ցույց է տալիս, որ կողմերին հաջողվել է ձեռք բերել բավականին կոնկրետ պայմանավորվածություններ: Անշուշտ, դրանք չէին կարող վերածվել գրավոր փաստաթղթի, քանի որ բանակցողները մի կողմից՝ պետական պաշտոնյաներ էին, իսկ մյուս կողմից՝ հեղափոխական կուսակցության ներկայացուցիչներ (Ռոստոմն ու Հովսեփ Միրզայանը): Բայց ինչպես ցույց տվեց ժամանակը՝ դա ամենևին էլ չխանգարեց ՀՅԴ ակտիվ մասնակցությանը Սահմանադրական հեղափոխության համար բեկումնային՝ 1908–1909 թթ. պայքարին, այսինքն՝ Թավրիզի պաշտպանության ու Թեհրանի ազատագրման գործին:

Պատճառն այն է, որ ի դեմս Ռոստոմի՝ պարսից սահմանադրականները գործ ունեին բազում տարիներ Եվրոպայի քաղաքական իրողություններին ծանոթացած ու դրանց համակարգում ՀՅԴ կապերի ու հարաբերությունների մնայուն հիմքերը դրած քաղաքական դեմքի ու միևնույն ժամանակ՝ Արևմտյան Հայաստանում ու Անդրկովկասում հեղափոխական պայքարի մեծ փորձ ունեցող անհատականության հետ: Վերջինս խորապես գիտակցում էր Սալմաստի գյուղերի վրա Թուրքիայի նախորդ՝ սուլթանական կառավարության հարձակման ու օկուպացիայի արդյունքները չհաղթահարած, բայց արդեն 1907-ին Ռուսաստանի ու Անգլիայի կողմից ազդեցության գոտիների բաժանած երկրի ծանր դրությունը: Պարսկաստանը, փաստորեն, չուներ կանոնավոր բանակ, ուստի արտաքին թշնամիներից պաշտպանվելու համար հույսը դրել էր առանձին ցեղախմբերի կողմից տրամադրվող անկանոն հեծելազորի վրա: Այս պայմաններում երկրին անհրաժեշտ էին լուրջ դաշնակիցներ՝ ոչ միայն թուրքական ներխուժումը կասեցնելու, այլև արդեն իսկ առկա ազդեցության գոտիները մնայուն բաժանարար գծերի չվերածելու համար: Բայց արտաքին աջակցության ապահովումը դժվարանում էր Սահմանադրական հեղափոխության դիմագրաված բարդ մարտահրավերների պատճառով: Զգալիորեն թուլացած շահական բռնապետությունը, հենվելով ռուսական սվինների վրա, փորձում էր լուծել միայն իր գոյատևման հարցը և պատրաստ էր անգամ մասնակի տարածքային զիջումներ անելու երկրի հակառակորդներին: Նրան դիմակայող Սահմանադրական հեղափոխության ղեկավարներն առաջնորդվում էին Պարսկաստանի ազգային շահերով, որոնք համահունչ էին ոչ միայն հայ ժողովրդի ու նրա առաջնորդ ուժի քաղաքական նպատակներին, այլև միջազգային հեղափոխական շարժման՝ Արևելքի ժողովուրդներին բռնապետական վարչակարգերի տիրա-

պետությունից ազատագրելու ձգտումներին: Բայց, քանի որ ավելի հզոր ուժերի՝ Ռուսաստանի ու Անգլիայի կողմից 1907 թվականին ազդեցության գոտիների բաժանվելու արդյունքում Պարսկաստանը ստիպված էր ժամանակ ձգել և ի վերջո՝ ընտրել չարիքներից փոքրագույնը, նրա դիմադրողականության ապահովման համար վճռական նշանակություն էր ձեռք բերում ներքաղաքական ճակատը: Այստեղ հարկավոր էր ստեղծել ուժերի այնպիսի հարաբերակցություն, որը թույլ չէր տա արտաքին թշնամիներին ու նրանց կամքը կատարող շահական իշխանությանը սեփական գահի պահպանման համար վաճառքի հանել երկրի հողերն ու օրինականացնել նրա հյուսիսի ու հարավի՝ առանց այդ էլ աշխարհագրական ու տնտեսական հիմքեր ունեցող տարանջատումը: Իսկ ներքաղաքական ճակատում ամրապնդվելու համար պարսիկ սահմանադրականները կարիք ունեին շահական վարչակարգի հանդեպ իրենց գերակայությունն ապահովող հեղափոխականների նորանոր խմբերի: Վերջիններիս ներհոսքը սկզբում իրականացվում էր Ռուսաստանից ու մանավանդ Կովկասից ժամանող սոցիալ-դեմոկրատների ու նրանց ձևավորած մոջահեդների ոչ մեծ խմբերի միջոցով: Մյուս կողմից էլ՝ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած 1908 թ. ռազմական հեղաշրջումից հետո սկսել էր գործել Կ. Պոլիս-Թավրիզ-Թեհրան գիծը: Սկզբում Պարսկաստանը դարձել էր հիմնականում սոցիալ-դեմոկրատական ու սոցիալիստական ուղղվածություն ունեցող ռուս, վրացի, կովկասյան թաթար հեղափոխականների ոչ մեծ խմբերի հավաքատեղի: Դրան զուգահեռ սկսել էին գործել նաև սուլթանական կառավարության՛ Ատրպատականը զավթելու փորձերի ձախողումից հետո ավելի նուրբ քաղաքական հնարքների դիմող երիտթուրքերի ներկայացուցիչները: Սրանք, Թուրքիայում ձևական դաշինքի մեջ լինելով ՀՅ Դաշնակցության հետ, Պարսկաստանում երկու դիմակ էին գործածում. մի կողմից՝ հանդես էին գալիս որպես շահական իշխանության դեմ մարտնչող Թավրիզի հեղափոխականների աջակիցներ, իսկ մյուս կողմից՝ նրանց ղեկավարներին դրդում էին անջատողական քայլերի: Բայց երկրորդ միտումը աստիճանաբար զսպվում էր ավելի հզոր ուժերի կողմից, քանի որ Պարսկաստանն արդեն իսկ ազդեցության գոտիների բաժանած Ռուսաստանն ու Անգլիան թուրքական կողմի հետ կիսվելու մտադրություն չունեին:

Մինչդեռ ՀՅ Դաշնակցության աջակցությունը Իրանի Սահմանադրական հեղափոխությանն անկեղծ էր ու անշահախնդիր: Քանզի դրա հիմքում ընկած էր հայ ժողովրդի անկեղծ բարեկամ Պարսկաստանին իր իրական քաղաքակրթական միջավայր վերադարձնելու համար անհրա-

ժեշտ եվրոպական արևելումի ապահովման խնդիրը: Դեռևս մեջլիսի ղեկավարության հետ Ռոստոմի բանակցությունների ժամանակ կուսակցությունը պարտավորվել էր Եվրոպայում քաղաքական-հարաբերական և քարոզչական աշխատանքներ ծավալել Պարսկաստանի սահմանադրական շարժման օգտին: Սակայն շարժման ղեկավարներն աշխատում էին ՀՅ Դաշնակցության միջոցով կապեր հաստատել նաև Ֆրանսիայի քաղաքական և անգամ պետական շրջանակների հետ և պետական վարկ ստանալ այդ երկրից՝ Պարսկաստանի դատարկված գանձարանը լցնելու համար: Բայց Ֆրանսիան չէր կարող նման քայլի դիմել առանց Պարսկաստանի հիմնական պարտատիրոջ՝ Ռուսաստանի երաշխիքների, որի հետ 1890-ականների սկզբներից ռազմական դաշինքի մեջ էր: Ռոստոմն ինքը նույնպես չէր հավատում արդեն իսկ կազմավորված Անտանտի մեջ մտնող Ֆրանսիայի սեպարատ քայլերի հավանականությանը: Սակայն տեղյակ լինելով Բալկաններում ու Կովկասի սահմանագծին ստեղծած լարած ռազմաքաղաքական իրավիճակին՝ որոշակի հույսեր էր փայփայում Բուլղարիայի հետ Պարսկաստանի ռազմաքաղաքական դաշինքի ձևավորման հեռանկարի հետ կապված:

Բանն այն է, որ իր Պարսկաստան մեկնելուց առաջ Ռոստոմը զբաղվել էր Բուլղարիայում ՀՅԴ Զինվորական դպրոցի ստեղծման աշխատանքներով: Բուլղարիան ու բալկանյան մյուս երկրները նախապատրաստվում էին թուլացող Օսմանյան կայսրությանը վերջին հարվածը հասցնելու գործին, որի կարևոր մասն էր լինելու Մակեդոնիայի ազատագրության համար պայքարող բուլղար-մակեդոնական շարժման հաղթանակը: Այդ շարժման առաջնորդները, մանավանդ՝ Ներքին մակեդոնական հեղափոխական կազմակերպության (ՆՄՊՕ) ղեկավար Բորիս Սարաֆովը (1872-1907), սերտ հարաբերությունների մեջ էին մի կողմից՝ ՀՅ Դաշնակցության, իսկ մյուս կողմից՝ Բուլղարիայի իշխանությունների հետ[14]: Դրանք շարունակվեցին ընդհուպ մինչև Բորիս Սարաֆովի ու նրա զինակից Իվան Գարվանովի նենգ սպանությունը 1907 թ. նոյեմբերի 28-ին:

Բուլղարիա-Իրան դաշինքի ձևավորման Ռոստոմի երազանքն անկատար մնաց: Դրա իրականացման խոչընդոտը դարձած համաշխարհային ու տարածաշրջանային տերությունների հետագա պահվածքը ցույց տվեց,

14 Այդ աշխատանքները հայ սպա Ռաշիդին (Տեր-Մաթևոսյան) հանձնվելուց հետո Ռոստոմի սկսած գործը տեղապտույտ էր ապրել, քանզի Բորիս Սարաֆովին ընդդիմադիր ձախակողմյան (ու նաև ռուսամետ) Յանե Սանդանսկու գլխավորած խմբավորումը մատնել էր Բուլղարիայում ՀՅ Դաշնակցության Զինվորական դպրոցի գոյությունն ու բուլղար-մակեդոնական շարժման հետ ՀՅԴ-ի կապերը:

որ նրանց համար Իրանի վերածնունդը բնական արգելք էր ստեղծելու Պարսկաստանը ազդեցության գոտիների տրոհելու ռուս–անգլիական և ապա՝ նորանկախ Հայաստանը նույնպես մասնատելու ռուս–թուրքական ծրագրերի համար:

Այդ պատճառով հայ ժողովրդի, իսկ ներկայումս՝ Հայաստանի պետականության շահերը պահանջում են չմոռանալ մեր նախնիների հեռատես ծրագրերը: Մանավանդ, որ ներկայումս աստիճանաբար պայմաններ են ստեղծվում Ֆրանսիայի ու Իրանի՝ Հայաստանի միջոցով ամրապնդվող փոխգործակցությունը խորացնելու և Բուլղարիայի փոխարեն նրանում Հունաստանին ներգրավելու համար:

Գևորգ Ս. Խուդինյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են հայոց նոր պատմության առանցքային հիմնահարցերը, այդ թվում՝ հայ ազգային–ազատագրական շարժման, Հայկական հարցի և Հայաստանի Հանրապետության պատմությունը: Հրապարակել է բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ հայ ազգային կուսակցությունների և առաջին հերթին՝ ՀՅԴ պատմության ու գաղափարաբանության վերաբերյալ: Զբաղվում է նաև պատմության տեսության ու մեթոդաբանության հիմնախնդիրների հետազոտությամբ:

Էլ. հասցե՝ khoudinyan@yahoo.com

Summary

THE ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION IN THE POLITICAL SYSTEMS OF ADVANCED ASIAN AND EASTERN EUROPEAN COUNTRIES AT THE END OF THE 19th CENTURY - THE BEGINNING OF THE 20TH CENTURY

Part V. ARF's key role in ensuring the European Orientation of the Iran Constitutional Revolution in 1905-1912

Gevorg S. Khoudinyan
Doctor of Historical Sciences

Key words - AR Federation, Iran (Persia), Constitutional Revolution, ties and relations, ARF Fourth General Meeting, Socialist International, Rostom, France, Bulgaria, European Orientation.

Until now, the deep connections and relations of the Armenian Revolutionary Federation with the forces and figures who participated and played a role in the Constitutional Revolution of Iran have not been revealed, in the context of which it is only possible to understand the real reasons for the active participation of the Armenian Revolutionary Federation in that revolution. After the 4th general meeting of the ARF (February-May 1907) and especially after the Stuttgart Congress of the Socialist International, at the end of 1907, the institutionalization of the cooperation of the ARF with the opposition and revolutionary forces of both the Ottoman Empire and Persia took place. As a result, the party, which showed serious fluctuations until then, very quickly reoriented itself towards the Iranian Constitutional Revolution that began in 1905, but accelerated only in 1906, taking upon itself the difficult task of ensuring its European orientation. The Constitutional Revolution of Iran was an attempt to overthrow the Ghajar dynasty of Turkic origin ruling the country and restore the historical mission of Persia as one of the key countries that laid the foundations of world civilization for centuries. The policy of HY Dashnaktsutyun to support that attempt was the continuation of the centuries-old civilizational mission of Armenia and Armenians to spread Hellenistic culture, Christian value system and then European Enlightenment ideas in Asian environments.

The cooperation of the ARF Dashnaktsutyun with the leaders of the Iranian Constitutional Revolution acquired a coordinated character as a result of the arrival in Tehran in December 1907 of the party representative Rostom (Stepan Zorian) and his negotiations with the leaders of the Iranian Majlis and influential figures of the Constitutional Revolution in the first days of January 1908.

In the person of Rostom, the Iranian constitutionalists were dealing with a political figure who had been acquainted with the political realities of Europe for many years and laid the lasting foundations of ARF connections and relations in their system, and at the same time, a personality with a great experience of revolutionary struggle in Western Armenia and Transcaucasia. Considering the difficult situation of the Balkan countries and the inevitability of a new war with the Ottoman Empire, he attached great importance to the creation of an alliance between independent Bulgaria and Persia.

During Rostom's negotiations with the Mejlis leadership, the party undertakes to carry out political-relational and propaganda work in Europe in favor of the constitutional movement of Persia. The leaders of the Mejlis were working to establish contacts with the political and even state circles of France through the AR Dashnaktsutyun and to get a state loan from that country to fill the empty coffers of Persia.

Rostom's dream of forming a Bulgaria-Iran alliance and ensuring France's support for Iran's Constitutional Movement remained unfulfilled. The subsequent behavior of the global and regional powers, which became an obstacle to its implementation, showed that for them the revival of Iran was a natural obstacle to the implementation of the Russian-British plans to divide Persia into spheres of influence and then to ravage Armenia. For this reason, the interests of the Armenian people, and currently, the statehood of Armenia, demand not to forget the visionary plans of our ancestors. Therefore, it is gratifying that currently conditions are gradually being created to deepen the cooperation between France and Iran, which is being strengthened through Armenia, and to involve Greece in it instead of Bulgaria.

Резюме

АРФ ДАШНАКЦУТЮН В ПОЛИТИЧЕСКИХ СИСТЕМАХ СТРАН ПЕРЕДНЕЙ АЗИИ И ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ В КОНЦЕ XIX-НАЧАЛЕ XX ВВ.

Часть пятая. Ключевая роль АРФ Дашнакцутюн в деле обеспечения европейской ориентации Иранской Конституционной революции 1905-1912 гг.

Геворк С. Худинян
Доктор ист. наук

До сих пор до конца не раскрыты связи и отношения АРФ Дашнакцутюн с политическими силами и отдельными деятелями –непосредственно участвовавшими в Конституционной революции в Иране и сыгравшими в ней ключевую роль. Между тем только в контексте этих взаимоотношений можно понять истинные причины активного участия АРФ Дашнакцутюн в этой революции.

После IV всеобщего собрания АРФ Дашнакцутюн (февраль-май 1907 г.) и, особенно Штутгартского конгресса Социалистического интернационала, в конце 1907 г. произошла **институционализация** сотрудничества АРФ Дашнакцутюн с оппозиционными и революционными силами как Османской империи, так и Персии.

В результате этих событий партия, которая до этого демонстрировала серьезные колебания, быстро переориентировалась на Конституционную революцию в Иране, начавшуюся в 1905 г., но набравшую силу только в 1906 г., взяв на себя трудную задачу обеспечения европейской ориентации Конституционной революции. Революция преследовала цель свергнуть правившую в стране династию тюркского происхождения Каджаров, и восстановить историческую миссию Персии как одной из ключевых стран, закладывавших основы мировой цивилизации на протяжении веков. Политика АРФ Дашнакцутюн, направленная на поддержку этой революции, была продолжением многовековой цивилизационной миссии Армении и армянства по распространению идей элли-

нистической культуры, христианской системы ценностей, а затем и европейского просвещения в азиатской среде.

Сотрудничество АРФ Дашнакцутюн с лидерами иранской Конституционной революции приобрело скоординированный характер в результате прибытия в Тегеран в декабре 1907 г. представителя партии Ростома (Степана Зорьян) и его переговоров с лидерами иранского Меджлиса и влиятельными деятелями Конституционной революции в первые дни января 1908 г.

В лице Ростома иранские конституционалисты имели дело с партийным лидером, имеющими большой опыт революционной борьбы в Западной Армении и в Закавказье и в то же время хорошо знакомым с политическими реалиями Европы и на протяжении многих лет устанавлившим тесные связи АРФ Дашнакцутюн с европейскими деятелями. Учитывая сложное положение балканских стран и неизбежность новой войны с Османской империей, он придавал важное значение созданию альянса независимой Болгарии с Персией.

В результате переговоров Ростома с руководителями Меджлиса, партия взяла на себя обязательство проводить политический лоббинг и пропагандистскую работу в Европе в пользу конституционного движения Персии. Руководители Меджлиса также стремились через АРФ Дашнакцутюн установить связи с политическими и даже государственными кругами Франции и получить кредит от этой страны, чтобы пополнить опустевшую казну Персии.

Но мечта Ростома о создании болгаро-иранского альянса осталась несбыточной. Дальнейшее поведение мировых и региональных держав, показало, что возрождение Ирана было препятствием для реализации российско-английских инициатив по разделению Персии на зоны влияния, а затем и русско-турецких планов по расчленению земель Армении. По этой причине интересы армянского народа, а в настоящее время и Республики Армения, требуют не забывать дальновидные планы наших предков. Потому что сегодня постепенно создаются условия для расширения сотрудничества между Францией и Ираном, которому во многом способствует Армения, и для вовлечения в этот процесс Греции - вместо Болгарии.

Օգտագործված գրականություն

1. **Ամուրեան Ա.**, ՀՅ Դաշնակցութիւնը Պարսկաստանում 1890–1918, Դաշնակցութեան 60–ամեակին առթիւ, Թեհրան, տպարան «Ալիք», 1950:
2. Դաշնակցութիւն. Եփրեմ. Պարսկական Սահմանադրութիւն (ՀՅԴ Կենտրոնական արխիւ), Ուսումնասիրեց եւ խմբագրեց՝ **Ամուրեան Ա.**, Ա. հատ., Թեհրան, տպարան «Ալիք», 1976, Բ. հատ., Թեհրան, 1979:
3. **Հակոբյան Ա.**, Պատմության տեսության ու մեթոդաբանության հարցերը Գ. Հեգելի «Դասախոսություններ պատմության փիլիսոփայությունից» աշխատության մեջ, «Վէմ», Եր., 2024, N 2:
4. **Յովհաննիսեան Յովսէփ**, Յուշեր, Ա հատ., Եր., «Գասպրինտ», 2006:
5. Նիւթեր Հ Յ Դաշնակցութեան պատմութեան համար, Գ. հատ., հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց **Հրաչ Տասնապետեան**, Պէյրութ, հրատարակութիւն ՀՅ Դաշնակցութեան, ա. թ.:
6. Ռոստոմ: մահուան վաթսունամեակին առթիւ, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1979:
7. «Ռոստոմի անտիպ նամակները», հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ՝ **Երուանդ Փամպուքեանի**, Եր., «Լուսակն», 2012:
8. **Վարանդեան Մ.**, ՀՅ Դաշնակցութեան պատմութիւն, Բ հատ., Բ հրատ., Թեհրան, 1981:
9. **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005:
10. История второго интернационала, т. 2, отв. ред. **Зубок Л. И.**, М., изд. «Наука», 1966.
11. **Ясперс К.**, Истоки истории и ее цель, в кн. «Смысл и назначение истории», https://predanie.ru/book/221102-smysl-i-naznachenie-istorii/#/toc2 (վերջին մուտք՝ 29.09.2024)

REFERENCES

1. **Amurean A.**, HY Dashnakts'ut'yunĕ Parskastanum 1890-1918, Dashnakts'utyean 60-ameakin aṛt'iv, T'ehran, tparan "Alik", 1950 (**In Armenian**)
2. Dashnakts'ut'yun Yep'rem Parskakan Sahmanadrut'yun (HYD Kentronakan arkhiv), Usumnasirets' yev khmbagrets'**, Amurean A**., A hat., T'ehran, tparan "Alik", 1976, B hat., T'ehran, 1979 (**In Armenian**)
3. **Hakobyan A.**, Patmut'yan tesut'yan u met'odabanut'yan harts'erĕ G. Hegeli "Dasakhosut'yunner patmut'yan p'ilisop'ayut'yunits" ashkhatut'yan mej, "Vem", Yer., 2024, N 2 (**In Armenian**)
4. **Yovhannisean Yovsep'**, Yusher, A hat., Yer, "Gasprint", 2006. (**In Armenian**)
5. Nyut'er HY Dashnakts'ut'ean patmut'ean hamar, G hator, Hratarakut'ean patrastets' yev khmbagrets' **Hrach Tasnapetean,** Peyrut', Hratarakut'yun HY Dashnakts'ut'ean, a. t'. (**In Armenian**)
6. Ṛostom: mahuan vat'sunameakin aṛt'iv, Peyrut', Hamazgayini Vahe Set'ean tparan, 1979 (**In Armenian**)
7. "Ṛostomi antip namaknerĕ", hratarakut'ean patrastut'yun, khmbagrut'iwn yev tsanot'agrut'iwnner, **Yeruand P'ampuk'eani**, Yer., "Lusakn", 2012 (**In Armenian**)

8. Varandean M., HY Dashnakts'ut'ean patmut'yun, B hat., B hrat, T'ehran, 1981 (**In Armenian**)
9. **Gegel′ G.**, Lekcii po filosofii istorii, SPb, 2005 11. Istoriâ vtorogo internacionala, t. 2, otv. red. **Zubok L. I.**, M., izd. Nauka, 1966 (**In Russian**)
10. **Yaspers K.**, Istoki istorii i ee celi, v kn. "Smysl i naznachenie istorii", https://predanie.ru/book/221102-smysl-i-naznachenie-istorii/#/toc2 (verjin mutk', 29.09.2024) (**In Russian**)